



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԿԱՆՈՆՔ

ԱՀԱԿԵՐՏԱՅ

ՃԵՄԱՐԱՆԻ ՄԱՅՐ ԱԹՈՒՈՅ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Ի ՎԱԿԱՐԵՆՆԱԿԱՆ

Ի ՏԳԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՌՅԻԴ — 1875

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Հ Ի Ր Ա Մ Ա Ն Ա Ի

Տ. Տ. ԳԵՈՐԳԻԱՅ Գ.

ՎԵՀԱՓՈՒ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿՍԹՈՒՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

235

ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՏ. ԳԱՏԱՍՏԱՆԻ

ԲԱՆԳԱՆԻ

1875-1876

01

4-21

Կ Ա Ն Ո Ն Բ

ԱՅԿԵՐՍԱՑ ՃԵՄԱՐԱՆԻ ՍՐՐՈՑ ԷԶՄԻՆՔՆԻ

Ա.

Կէտ նպատակի ձեմարանիս զոլով պատրաստել
Հայաստանեայց եկեղեցւոյ պաշտօնեայս բարեկրօնս
եւ բարեկիրթս, յառաջ քան զամենայն պահանջի յա-
շակերտաց սորին ողի բարեպաշտութեան, այս ինքն
է ողի երկիւղի Աստուծոյ, հանդերձ աստուածսիրու-
թեամբ եւ աղօթասիրութեամբ եւ այլովքն քրիստո-
նէական առաքինութեամբ:

707

Բ.

Գլուխ ամենայն առաքինութեանց պահանջելոց
յաշակերտաց ձեմարանիս՝ է անտրտունջ հնազան-
դութիւն հրամանաց Տեսչին եւ այլոց պաշտօնէից, եւ
կարգադրութեանց նոցա, եւ անվճար պահպանութիւն
կանոնաց սորին:

Գ .

Եղբայրսիրութիւն հիմնեալ ի վերայ աստուածսիրութեան՝ հիմն է բարեկիրթ զնացից աշակերտացն ընդ միմեանս . ուստի հեռի եղիցի ի նոցանէ՛ նախանձ, հակառակասիրութիւն, ատելութիւն, ոխակալութիւն, չարախօսութիւն, զրպարտութիւն, բամբասանք, դաւաճանութիւն եւ կեղծաւորութիւն:

Դ .

Քաջ զիտելով՝ զի ուր իցեն երկու կամ երեք ժողովեալ յանուն Քրիստոսի՝ անդ է եւ ինքն Քրիստոս՝ ճշմարտութիւնն յակտեմական, պարտին աշակերտք հեռի լինել յամենայն ստուծենէ, որ կնիք է սատանայի՝ հօրն ստուծեան:

Ե .

Գլուխ եւ առաջնորդ եւ օրինակ ամենայն վարդապետաց եւ ուսուցչաց Քրիստոս է . եւ ահա նա ինքն ասէ ցմեզ . « Ուսարուք յինէն՝ զի հեզ եմ եւ խոնարհ սրտիւ, եւ զոչիք հանգիստ անձանց ծերոց » . վասն որոյ պարտ է մեզ խոնարհութեամբ

սրտի եւ հեղութեամբ զնացից յայտ առնել՝ զի ճշմարիտ եւ հարազատ աշակերտք ենք Քրիստոսի, եւ հեռի լինել յոգոյ ինքնահաճ ամբարտաւանութեան . եւ կամակոր յամառութեան ի բանս եւ ի կարծիս անձանց:

Զ .

Աշակերտք պարտին ճշդիւ պահպանել զամենայն կանոնս քաղաքավարութեան ի զնացս եւ ի շարժմունսս, ի խօսս եւ ի զրութիւնս, մանաւանդ ի վարմունսն ընդ իշխանաւորս իւրեանց, ընդ վարժապետս եւ ընդ վերակացուս, եւ ընդ միսեանս:

Է .

Իբրեւ որդիք սիրելիք լուսածնի մօրս մերոյ՝ Հայաստանեայց Եկեղեցոյ՝ պարտին աշակերտք վառ եւ բորբոք ունել զսիրտս իւրեանց սիրով մերոյս Եկեղեցոյ եւ Ազգի, զուն զործելով սուտար լինել արդեամբք եւ բանիւք պայծառութեան նորին եւ յաւաջաղէ՛մ զարդացմանն:

Ը .

Փոյթ մեծ պահանջի յաշակերտաց ի պահպանութիւն մաքրութեան անձանցն եւ հանդերձից, այնպէս

զի մի ինչ իցէ ի նոսա արատ կամ աղտեղութիւն,
եւ ոչ պատառուած ի հանդերծսն եւ ի կօշիկս:

Թ.

Չներքնահանդերծս փոխեն աշակերտք երկիցս
յեօթնեկի յամարան, եւ մի անդամ յեօթնեկի ի ձմե-
րան. եւ յամարայնի մերթ զնան ի բաղանիս:

Ժ.

Պարկեշտութիւն եւ համեստութիւն պարտին փայ-
լել յամենայն զնացս եւ ի զրոյցս աշակերտաց՝ իբ-
րեւ զերագոյն զարդք քրիստոսասէր կրօնաւորի եւ
ամենայն առն բարեպաշտի: Վասն որոյ հեռի պար-
տին լինել ի նոցանէ՝ ամենայն ծաղրածութիւնք եւ
անպատեհ ասացուածք, որպիսի են յիշոցք եւ հայ-
հոյութիւնք, եւս եւ ձեռնախաղ եւ ձգձղեն զվիմեանս
վայրապար՝ ընդդէմ օրինաց՝ վայելուչ կենցաղավա-
րութեան, որպէս եւ պէրանք եւ պճնասիրութիւն:

ԺԱ.

Ի խօսս իւրեանց պարտին աշակերտքն եղբարս կո-
չել զվիմեանս:

ԺԲ.

Աշակերտք ոչ ունին հրաման ի զրոյցս եւ ի խաղս
պարապել եւ ոչ ընդ միումն ի ծառայից եւ ի սպա-
սաւորաց ճեմարանիս, այլ յամենայն պէտս իւրեանց
պարտին զիմի առ Օգնական Տեսչին, եւ առ Վերա-
կացուս:

ԺԳ.

Ուսումնասիրութիւն եւ աշխատասիրութիւն ողի
եւ կենդանութիւն են աշակերտելոցն ճեմարանիս.
Վասն որոյ ամենայն որ պարտի հեռի լինել ի ծու-
լութենէ եւ ի դատարկութենէ՝ որ մայրն է ամենայն
չարեաց:

ԺԴ.

Ի դասարանս ամենայն որ պարտի պարապել յու-
սումն դասուց՝ զորս առեալ իցէ. եւ եթէ յայլ ինչ
կամիցի պարապել, պարտի ունել առ այն զհրաման
ի վարժապետէն՝ հաւանութեամբ Օգնականի Տեսչին:

ԺԵ.

Տրտունջք եւ տժգոհութիւնք զկերակրոց եւ զհամ-
դերծից եւ զայլմէն ամենայնէ զգուշակն են ամե-

ներին եւ պարսաւելի. այլ պարտ է աշակերտացն հեզութեամբ եւ անկեղծօրէն յայտ առնել զպէտուս իւրեանց կամ զօժգոհութիւնս իսկ՝ Օգնականի Տեսչին, եւ նա հոգ կալցի զոհացուցանել զնոսա ըստ կարի:

ԺԶ.

Ի ժամս դասառութեան ոչ է օրէն ումեք զնալ յըմպել զըուր եւ կամ ի պէտուս. այլ ի ժամս պարսպոյ եւ հանգստեան եւեթ պարտին պատրաստիլ եւ այնպէս մտանել յընթերցարան եւ ի դասարանս:

ԺԷ.

Ի սեզանի ոչ է օրէն աշակերտաց փոխանակել ընդ միմեանս զկերակուրս, եւ ոչ բառնալ ի սեզանոյ եւ տանել արտաքս զհաց կամ զվիրգս եւ կամ զայլ ինչ յուտելեաց:

ԺԸ.

Խոստիւ արգելեալ է աշակերտաց ծխել զծուխ, այս ինքն է զփափիթօս կամ զսիկար:

ԺԹ.

Մէն մի յաշակերտաց պարտի ունել զթուանշան տուեալ նմա յՕգնականէ Տեսչին յաւուր մտիցն ի ճե-

մարան, եւ զայն դրոշմել ի վերայ ամենայնի զոր ինչ ընդունիցի ի ճեմարանին. իսկ զոր ինչ ընդ իւր բերեալ իցէ ի մուտս իւր ի ճեմարանն՝ պահի այն յառանձինն ծրարի՝ ունելով ի վերայ ծրարին զթուանշան նորա:

Ի.

Ոչ ումեք օրէն է առնուլ կամ սեպականել անմին զոր ինչ ոչ իւրն իցէ:

ԻԱ.

Ոչ է օրէն աշակերտաց ունել կամ պահել առ իւրեանս զարծաթ. այլ զոր ինչ դրամ եւ ունիցին՝ աւանդեն Օգնականի Տեսչին, եւ նա զրէ ի տումարի զանուն աւանդողին եւ զգումարն:

ԻԲ.

Ոչակերտր՝ որոց չեւ իցէ ընկալեալ զաստիճան սարկաւազութեան՝ ոչ ունին հրաման արձակել զմորուս:

ԻԳ.

Հրաման է աշակերտաց ազատօրէն նամակագիր լինել առ ծնողս իւրեանց կամ առ ազգակիցսն, ըստ սահմանեալ ժամանակաց:

ԻԴ.

Ոչ է օրէն աշակերտաց պարապել յընթերցումն ի շրջագայելն ի պարտիզի կամ այլուր, որպէս եւ ոչ ի ննջարանս:

ԻԵ.

Ամենայն զրեան եւ զրուածք որ զտանիցին ի ձեռս աշակերտաց՝ պարտին յայտնի լինել Օգնականի Տեսչին, եւ ունել զստորազրուածիւն նորա:

ԻԶ.

Ամենայն աշակերտք զնան լուծեամբ եւ զոյգ զոյգ յեկեղեցի ի կիրակամուտս, ի նախատօնակս, յառաւօտու եւ յերեկոյի կիրակէից եւ տօնից, եւ ի ժամ պատարադի, եւ որք ծայնեղքս իցեն ի նոսա, ըստ կարգադրութեան Օգնականի Տեսչին՝ ասեն զվիոխ եւ առնեն զդպրութիւն: Ի կալ աշակերտացն յեկեղեցուջ եւ ի սպասաւորել ի տաճարի Տեառն՝ խըստիւ պահանջի ի նոցանէ զգաստութիւն եւ համեստութիւն յոյժ, եւ միանգամայն ընդ ներքնոյն ջերմեռանդութեան արտաքին եւս ցոյցք եւ նշանակք բարեպաշտութեան ըստ օրինի Հայաստանեայց Եկեղեցւոյ:

ԻԷ.

Ամենայն աշակերտք խոստովանին եւ հաղորդին սրբոյ Խորհրդոյն երիցս ի տարուջ, այս ինքն ի տօնի Աստուածայայտնութեան, ի տօնի Զատիկ յարութեան Տեառն (յաւուր աւագ Հինգշաբաթուն), եւ ի տօնի Վերափոխման սուրբ Աստուածածնին:

ԻԸ.

Եթէ դէպ լինիցի աշակերտի ումեք հիւանդանալ՝ առաքի ի Հիւանդանոցն հրամանաւ Օգնականի Տեսչին, եւ ոչ ելանէ անտի մինչև եւ առեալ իցէ հրաման ի բժշկէն:

ԻԹ.

Ի վարձատրութիւն եւ ի իրախոյս բարեկրօն զնացից եւ փութաշան ուսումնասիրութեան աշակերտաց տուեալ լինին նոցա ոչ միայն սովորական նշանակքն, այլ եւ ամօրեայ գովութիւնք առաջի ընկերակցացն, եւս եւ եռամսեայ վկայադիրք որք մատուցանին ի նկատումն Տեսչին, եւ առ ծնողս եւս աշակերտացն առաքին, եւ ի տարեկան հանդիսի հարցաքննութեան բաշխին նոցա հրամանաւ Վեհափառ Կաթողիկոսի զրեան պիտանի:

Լ.

Եթէ որ յաշակերտաց յանցանիցէ ընդդէմ կանոնաց ճեմարանիս, յառաջնումն նուազի խրատի առանձինն յՕգնականէ Տեսչին, յերկրորդումն յանդիմանի ի նմանէ առաջի դասակցացն, յերրորդումն առաջի ամենայն աշակերտաց, եւ ի չորրորդումն ի Տեսչէն. եւ եթէ ոչ զայցէ յուղղութիւն, առնու ի նմանէ զնշանակն 1 կամ 0, ըստ չափու ծանրութեան յանցուածոյն. եւ եթէ այնու եւս ոչ ուղղիցի, եւ կամ ըմբոստանայցէ ընդդէմ Տեսչին կամ Օգնականի նորա, եւ կամ վարժապետաց եւ վերակացուաց, եւ անուղղայ մնայցէ, ի բաց արժակի հրամանաւ Տեսչին:

ԼԱ.

Հանապաղորդ կարգ պարապմանց եւ բաժանումն ժամանակի ի ճեմարանիս այս է.

1. Յառաւօտուն (յամարայնի ի 4 ժամու եւ ի ձմերան ի 5 կամ 5¹ շ ժամու) հարկանեն զիշերապահրն զզանդակ: Աշակերտքն զարժուցեալ խաչակնքն զերեսս, յառնեն անդանդադ, զգննուն զհանդերծս լուծեամբ եւ պարկեշտութեամբ, լուանան

զերեսս, սանտրեն զզլուխս, յարդարեն զիւրաքանչիւր անկողինս, եւ յետ կիսոյ ժամու ի հարկանել զարժեալ զանդակին դասաւորեալք ի սրահի առ դուրս ննջարանացն ի միում շարի, առաջնորդութեամբ վերակացուաց զնան զոյգ զոյգ եւ հանդարտօրէն յԸնթերցարանն, եւ անդ կանգնեալք ընդ արեւելս՝ կատարեն միաբան մտադրութեամբ եւ ջերմեռանդութեամբ զսահմանեալ աղօթս առաւօտու:

2. Նստին ապա անշփոթ կարգաւ եւ լուծեամբ յիւրաքանչիւր տեղիս յԸնթերցարանին, եւ մի ոմն յաշակերտաց կարգաւ ընթեռնու ի լուր ամենեցուն զզլուխ մի բանից ի սուրբ Աւետարանէն:

3. Յաւարտ ընթերցմանն զնան կարգաւ յիւրաքանչիւր դասարանս, եւ ամենայն որ պատրաստէ լուծեամբ զուսումն դասուց աւուրն ըստ ցուցակին:

4. Ի 6 կամ յ7 ժամու հարկանի զանդակ, եւ զնան ամենեքեան կարգաւ ի սեղանատուն՝ առնել զնախաճաշ, այս ինքն յրմպել զչայ:

5. Ելեալ կարգաւ ի սեղանոյն արտաքս՝ յակնարկել վերակացուաց լուծանեն աշակերտքն զլուծիւն եւ զքօսնուն ցժամ 8 ի պարտիզի, եւ եթէ օդն խանակ իցէ՝ ի սրահի ներքնայարկին ճեմելով:

6. 8 8 ժամու հարկանի զանգակ, եւ աշակերտքն դասաւորեալք նախ ի սրահի ըստ իւրաքանչիւր դասուց՝ զնան կարգաւ ի դասարանս, եւ սկիզբն լինի դասառութեան:

7. Յաւարտ միոյ միոյ դասառութեան, այս ինքն յետ միոյ ժամու՝ տուեալ լինի հանդիստ, հրաման խօսելոյ ընդ միմեանս եւ պատրաստելոյ զդասս, ոչ աւելի քան զքառորդ մի ժամու:

8. Ի ժամ 12 ի ձայն զանգակի ելանեն՝ աշակերտքն յիւրաքանչիւր դասարանաց, շարակարգին ի սրահի ըստ դասուց, եւ յակնարկել Վերակացուաց զնան կարգաւ ի սեղանատուն եւ կանգնին յիւրաքանչիւր տեղիս, եւ յետ անելոյ Տեսչին կամ Օգնականի նորա զՀայր մերն՝ նստին ճաշել հանդարտութեամբ եւ լուռութեամբ:

9. Ի ժամ ճաշուն, որպէս եւ ընթերցացն, մի ոմն յաշակերտաց ըստ շարաթական կարգի նստեալ առանձինն առաջի գրասեղանոյ՝ ընթեռնու զգլուխ մի յԱստուածաշունչ գրոց, եւ ապա յայլ ինչ պատմական գրեւոյ, ըստ նշանակելոյ Օգնականի Տեսչին:

10. Յետ աղօթիցն գոհութեան ելանեն աշակերտքն կարգաւ եւ զնան ի պարտէզ՝ շրջագայել եւ խաղալ եւ զբօսնուլ ց2 ժամ զկնի միջօրէին:

11. Ոչ է օրէն աշակերտաց ննջել իցերեկի, որպէս եւ ոչ զնալ հրէք ի ննջարանս:

12. 8 2 ժամու ի ձայն զանգակի շարադասին աշակերտք ըստ առաւօտեան կարգին եւ զնան ի դասարանս, եւ սկսանին դարձեալ դասառութիւնք, որ տեւեն ցժամ 3. ապա յետ իւր ժամու միոյ եւ կիսոյ հանգստեան եւ շրջագայութեան ի պարտիզի, պարապին յԸնթերցարանի այլ եւս ժամ մի ի պատրաստել առանձինն զդասս վաղուին:

13. 8 7 ժամու երեկոյին զնան յԸնթրիս ըստ առաջնոյ կարգին:

14. Ի գարմին իւրեանց հաւարեալք յառաջիկայութեան Օգնականի Տեսչին եւ Վերակացուացն՝ խօսին եւ զբօսնուն մինչեւ ցժամն 8 1/2. ապա ի ձայն զանգակի լռեալ ի խօսից՝ զնան կարգաւ առնել միաբան յԸնթերցարանի զաղօթս երեկոյին, եւ անտի անցեալ յիւրաքանչիւր ննջարանս՝ մերկանան զհանդերձս իւրեանց պարկեշտութեամբ եւ լուռութեամբ, եւ խաչակնքեալ զանձինս՝ ի բուն լինին:

13. Սոյն այս կարգ պահի ընդհանրապէս եւ յաւուրս տօնից եւ կիւրակէից. միայն թէ

ա, Վաղագոյն յարուցեալ քան զսովորականն՝ զնան յեկեղեցի:

բ, Զկնի նախաճաշին եւ առաջին հանգստեան լսեն զխրատ ըստ աւուրն պատշաճի ի Տեսչէն կամ յՕգնականէ նորա :

գ, Զկնի պատարազին զքօսնուն մինչեւ ցճաշաժամն:

դ, Յերեկոյին զնան դարձեալ յեկեղեցի. եւ անտի դարձ արարեալ ի ճեմարան՝ առնեն զկրթութիւն ատենախօսութեան յԸնթերցարանին յառաջիկայութեան Տեսչին եւ Օգնականի նորա եւ Վերակացուացն եւ ընկերակցաց իւրեանց՝ իբր ժամ մի. ապա զնան շրջագայել ի պարտիզի կամ արտաքոյ ճեմարանիս եթէ օդն ներիցեն:

235

4 - 21

ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏ. ԳԱՏԱԿԱՆ

ԲԱՆԴԱ